ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 25/1/1

16 ապրիլի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Սարիկ Մինասյանը, Վահագն Մկրտչյանը, Էմմա Բարսեղյանը, Լեվոն Անանյանը, Շավարշ Արամյանը, Քնարիկ Հարությունյանը, Հովհաննես Մանուկյանը, Էդգար Բաղդասարյանը, Գայյա Հայրապետյանը, Անդրանիկ Հակոբյանը, Նարեկ Բեգզադյանը, Աստղիկ Բեյբուտյանը, Վահան Դավթյանը, Լուսինե Նազարյանը, Կարեն Գրիգորյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

ՀԼՄ ներկայացուցիչներ, ԱԺ պատգամավորներ, հյուրեր, համայնքի բնակիչներ, Գյումրու համայնքապետարանի ստորաբաժանումների պետեր և աշխատակիցներ:

Նիստը վարում էր ավագանու տարիքով ավագ անդամ՝ Վարդան Ղուկասյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Սերգեյ Իսրայելյանը:

Նիստը հայտարարվում է բացված :
(Հնչում է Գյումրի քաղաքի օրհներգը)

Նիստը վարողը հայտնում է, որ Հայաստանի Հանրապետության թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025թ. ապրիլի 6-ի N 19-Ա որոշման համաձայն Գյումրի համայնքի ավագանին ընտրվել է և մանդատները բաշխվել են հետևյան կերպ.

«Քաղաքացիական պայմանագիր» սոցիալական կուսակցություն - 14 մանդատ,
Հայաստանի կոմունիստական կուսակցություն - 8 մանդատ,
«Մեր քաղաքը» կուսակցությունների դաշինք - 6 մանդատ,

«Իմ հզոր համայնք» կուսակցություն - 3 մանդատ,
«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք - 2 մանդատ:

Հայաստանի Հանրապետության թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025թ. ապրիլի 14-ի N 1 արձանագրության համաձայն ավագանու անդամներ են ընտրվել

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից

1) Մինասյան Սարիկ Սամվելի,
2) Մկրտչյան Վահագն Հրաչի,
3) Բարսեղյան Էմմա Մասիսի,
4) Անանյան Լևոն Գագիկի,
5) Արամյան Շավարշ Արամի,
6) Հարությունյան Քնարիկ Համլետի,
7) Մանուկյան Հովհաննես Սամվելի,
8) Բաղդասարյան Էդգար Սանասարի,
9) Հայրապետյան Գալյա Վարազդատի,
10) Հակոբյան Անդրանիկ Էդուարդի,
11) Բեգզադյան Նարեկ Հովհաննեսի,
12) Բեյբուտյան Աստղիկ Գագիկի,
13) Դավթյան Վահան Սամվելի,
14) Նազարյան Լուսինե Հովհաննեսի:

Հայաստանի կոմունիստական կուսակցության ընտրական ցուցակից

1) Ղուկասյան Վարդան Կոլյայի,
2) Առաքելյան Ավետիս Գուրգենի,
3) Անանյան Լուսինե Հակոբի,
4) Ղուկասյան Գևորգ Կոլյայի,
5) Սահակյան Սեդրակ Ենոքի,
6) Մեսրոպյան Նարինե Մուշեղի,
7) Հարությունյան Արտակ Սամվելի,
8) Լալազարյան Կարինե Սոսի:

«Մեր քաղաքը» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից

1) Ադամյան Սվետլանա Միշայի,
2) Գևորգյան Հովհաննես Մնացականի,
3) Գասպարյան Լիզա Մելիքի,
4) Գրիգորյան Կարեն Մարտունի,
5) Բաղալյան Կարեն Հրայրի,
6) Եդիգարյան Վարդան Աշոտի:

«Իմ հզոր համայնք» կուսակցության ընտրական ցուցակից

1) Մխիթարյան Ռուբեն Դավթի,
2) Կիրակոսյան Վահե Սամվելի,
3) Մոսոյան Սուսաննա Հակոբի:

«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից

1) Սիմոնյան Կարեն Անդրանիկի,
2) Մուրադյան Աննա Եղիշի:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝

Ավագանու խմբակցությունները ստեղծվում են նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը՝ հետևյալ սկզբունքին համապատասխան. ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում:

Այսպիսով Գյումրի համայնքի ավագանու կազմում գործելու են թվով հինգ խմբակցություններ՝

1. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն

2. Հայաստանի կոմունիստական խմբակցություն

3. «Մեր քաղաքը» խմբակցություն

4. «Իմ հզոր համայնք» խմբակցություն

5. «Մայր Հայաստան» խմբակցություն

Նիստը վարողը տեղեկացրեց նաև, որ ավագանու առաջիկա նիստում հրապարակելու համար խմբակցությունները համայնքի ղեկավարին պետք է գրավոր ներկայացնեն իենց կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի, քարտուղարի անունները և ազգանունները:

Նիստը վարողը ներկայացրեց Գյումրի համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստի օրակարգը, որը համաձայն Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 94-րդ կետի՝ ընդգրկում է հետևյալ հարցերը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ժամանակվոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:
2. Համայնքի ղեկավարի ընտրություն:
3. Համայնքի ղեկավարի երդման արարողության հետ կապված կազմակերպչական հարցեր:
4. Հանձնաժողովների կազմավորում:
5. Հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների առաջադրում:
6. Ավագանու հերթական նիստի գումարման օրվա սահմանում:

Նախքան օրակարգային հարցերին անցնելը ավագանու Հայաստանի կոմունիստական խմբակցությունից Սեդրակ Սահակյանն առաջարկեց օրակարգի՝ 3-րդ և 4-րդ հարցերը՝ Համայնքի ղեկավարի երդման արարողության հետ կապված կազմակերպչական հարցեր, Հանձնաժողովների կազմավորում, հանել օրակարգից՝ հաջորդ նիստին քննարկելու համար:

Առաջարկը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն և հաստատվեց նիստի լրամշակված օրակարգը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

1. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(ՁԵԿ. ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 88-րդ և 89-րդ կետերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի՝ ավագանու հինգ անդամից բաղկացած ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

2. Հաստատել հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝

1)Սահակյան Սեդրակ - Հայաստանի կոմունիստական խմբակցություն,
2) Ադամյան Սվետլանա-«Մեր քաղաքը» խմբակցություն,
3) Կիրակոսյան Վահե- «Իմ հզոր համայնք» խմբակցություն,
4) Մուրադյան Աննա -«Մայր Հայաստան» խմբակցություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 2-Ա)*

2. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(ՁԵԿ. ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ)

Նիստը վարողը ներկայացրեց համայնքի ղեկավարի ընտրության անցկացման կարգը:

Յուրաքանչյուր խմբակցությունից մեկ ներկայացուցիչ մոտենում է ամբիոնին և ներկայացնում Գյումրի համայնքի ղեկավարի իր խմբակցության թեկնածուի անունը, ազգանունը, հայրանունը կամ իր խմբակցության անունից հայտարարում համայնքի ղեկավարի թեկնածու չառաջադրելու մասին:

Առաջադրվել են համայնքի ղեկավարի հետևյալ թեկնածությունը.

Հայաստանի կոմունիստական խմբակցություն՝ Վարդան Ղուկասյան

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմին և ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովին տրամադրվում է 30 րոպե ժամանակ Գյումրի համայնքի ավագանու 2025թ. ապրիլի 16-ի համայնքի ղեկավարի ընտրության բաց քվեարկության անցկացման քվեաթերթիկները պատրաստելու համար:
Ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի անդամներից Սեդրակ Սահակյանը ներկայացրեց քվեարկության կարգը, քվեաթերթիկի նմուշը և քվեարկության ժամը հայտարարելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հերթականությամբ հնչեցնում է Ավագանու անդամի :

Ավագանու անդամները՝ անունը, ազգանունը հնչեցնելուց հետո, հերթականությամբ մոտենում են նիստը վարողին, ստանում իրենց անվանական քվեաթերթիկը, կատարում ընտրությունը, ստորագրում քվեաթերթիկի վրա և այն հանձնում նիստը վարողին: Քվեարկությունը տևողությունը 30 րոպե է:

Ամբիոնի մոտ է հրավիրվում Ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովից Սեդրակ Սահակյանը՝ քվեարկության արդյունքները հրապարակելու համար:

Առաջադրված թեկնածուին «կողմ» կամ «դեմ» քվեարկված անվանական քվեաթերթիկների քանակը՝ «կողմ» 18 (*տասնութ*), «դեմ» 0 (զրո):

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի՝ 2025թվականի ապրիլի 16-ի N ԺՀՀ/1 արձանագրությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար ընտրել Վարդան Կոլյայի Ղուկասյանին:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 2-Ա)*

Ողջույնի խոսքով հանդես է գալիս համայնքի նորընտիր ղեկավարը:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(Զեկուցող՝ համայնքի ղեկավար)

Նիստը վարողը ներկայացրեց համայնքի ղեկավարի երդման արարողության ընթացակարգը և խնդրեց տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքի ղեկավարն իր լիազորություններն ստանձնում է իր ընտրվելուց հետո՝

երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում համայնքի բնակիչներին տրված երդմամբ:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Գյումրի համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանի երդման արարողությունը տեղի կունենա 2025թ. ապրիլի 19-ին օրենքի ուժով հրավիրված ավագանու երդմնակալության նիստին: Նիստը տեղի է ունենալու Գյումրու համյնքապետարանի ավագանու նիստերի դահլիճում՝ ժամը 11:00- ին:

Ընդունվել է ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 96-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի մայիսի 02-ը՝ ժամը՝ 12:00:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 3-Ա)*

Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Ավագանու անդամներ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Լ. ԱՆԱՆՅԱՆ

Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ

Ս. ԱԴԱՄՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կ. ԲԱԴԱԼՅԱՆ

Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ

Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ս. ՄՈՍՈՅԱՆ

Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք. Գյումրի
2025թ. ապրիլի 16